ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.03.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/04

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

Քաղաքացի Արամ Անթանյանի (անձնագիր՝ AT0475063՝ տրված 08.10.2019՝ 029-ի կողմից),

«Աշտարակի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Գ. Աղաբաբյանի (պետական գրանցման վկայական թիվ 16.210.00860),

Ներկայացուցիչներ՝

Հ.Պետրոսյանի (լիազորագիր՝ տրված 01.03.2021թ.),

Ս.Հակոբյանի (լիազորագիր՝ տրված 01.03.2021թ.),

Մ.Արշակյանի (լիազորագիր՝ տրված 01.03.2021թ.),

Մ.Սիմոնյանի (լիազորագիր՝ տրված 01.03.2021թ.),

քննելով «Աշտարակի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար մեքենայի վարձակալության ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԱՇՏՄԱԿ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով գնանշման

հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում քաղաքացի Արամ Անթանյանի կողմից 22.02.2021թ. ներկայացված (23.02.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/04 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>Արամ Անթանյանի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Քաղաքացի Արամ Անթանյանը 30.12.2020թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«Սույն թվականի փետրվարի 12-ին «Աշտարակի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ը, որը գտնվում է ՀՀ, ք. Աշտարակ, Տիգրան Մեծի 25 շենք հասցեում, հայտարարել էր գնանշման հարցման հրավեր: Համաձայն, որի այս ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակցին սահմանված կարգով պետք է առաջարկվեր կնքել մեքենայի վարձակալության մատուցման պայմանագիր: Նշված հարցման հրավերը ընդունելով՝ նույն թվականի փետրվարի 19-ին ճիշտ ժամանակին ներկայացել եմ հրավերում առկա հասցե, որպեսզի գնման գործընթացին մասնակցելու հայտ ներկայացնեմ, բայց, հանդիպելով գնման գործընթացում մի շարք ակնհայտ ապօրինությունների, տեղում հրաժարվել եմ դրան մաս դառնալ և հայտ չեմ ներկայացրել:

Նշյալ ապօրինությունները ներկայացված են ստորև.

Նախ Կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման Հավելված N 1-ի (այսուհետ՝ Որոշում) հոդված 26-ի 2-րդ կետի համաձայն. «Գնահատող հանձնաժողովի գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով: Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է հանձնաժողովի անդամների երկու երրորդը: Հայտերի բացման նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են հանձնաժողովի քարտուղարը և հանձնաժողովի առնվազն երկու անդամ.»:

Վերոնշյալից պարզ է դառնում, որ հանձնաժողովի քարտուղարի ներկայությունը բացման նիստն իրավազոր համարելու համար պարտադիր պայման է, որն ակնհայտորեն չի պահպանվել: Տվյալ դեպքում գնահատող հանձնաժողովի քարտուղար Ֆ. Մանգյանը չի ներկայացել Հայտերի բացման վայր, այն է՝ ՀՀ, ք. Աշտարակ, Տիգրան Մեծի 25 շենք հասցե և պատշաճ կերպով չի իրականացրել իր լիազորությունները, դեռ ավելին նիստին

հանձնաժողովի մասնակիցներից ներկա է եղել միայն հանձնաժողովի նախագահ Հասմիկ Պետրոսյանը, ինչն, անշուշտ, խախտում է Որոշման վերոնշյալ պարտադիր պահանջները:

Սակայն այսքանով չի ավարտվել ապօրինությունների շարքը, մասնավորապես՝ նույն Որոշման հոդված 26-ի 5-րդ կետի համաձայն. «Նիստերը տեսաձայնագրվում կամ ձայնագրվում և արձանագրվում են, և յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը: Արձանագրությունը գնման ընթացակարգի արձանագրության անբաժանելի մասն է.»:

Նշված պարտադիր կատարման ենթակա իրավակարգավորման էությունից բխում է, որ հանձնաժողովի կողմից անցկացված նիստերը ենթակա են անպայման տեսաձայնագրման կամ ձայնագրման, այսինքն իրավասու մարմինը պոզիտիվ պարտականություն է սահմանել հանձնաժողովի համար իրականացնելու տեսաձայնագրման կամ ձայնագրման գործողություններ, ապահովելով գնման գործընթացի թափանցիկությունն ու անաչառությունը, ինչը ևս անտեսվել է և անգործության արդյունքում չի իրականացվել:

Ինձ հայտնի է նաև, որ հանձնաժողովի բացակա անդամները ստորագրման ենթակա փաստաթղթերը ստորագրել են նիստի անցկացման հաջորդ օրը՝ 20.02.2021թ.-ին, որին ներկա եմ եղել անձամբ և իմ կողմից նրանց հայտարարվել է, որ ակնհայտ ապօրինի գործընթացներում են ներքաշվել, սակայն ապարդյուն:

Սույն ապօրինությունները հաստատող փաստական ապացույցների բացակայությունը պայմանավորված է բացառապես այն հանգամանքով, որ ենթադրյալ տեսաձայնագրման կամ ձայնագրման կրիչը հասանելի է միայն հանձնաժողովի անդամներին և քարտուղարին:

Ակնհայտ է, որ գնման գործընթացում պարտադիր ներկա գտնվելու պարտավորություն ունեցող անձանց չներկայանալը չի տեսանկարահանվել կամ ձայնագրվել, որպեսզի ես՝ որպես գնման գործընթացին մասնակցել ցանկացող անաչառ հայտատու, զրկվեմ օրենքով սահմանված կարգով իմ իրավունքներից օգտվելուց, ինչպես նաև զրկվեմ հետագայում իմ խախտված իրավունքների վերականգնման օրինական հիմքերից»:

Ամփոփելով վերոգրյալը՝ քաղաքացի Արամ Անթանյանը խնդրել է՝

1. Պատվիրատուից պահանջել ներկայացնել «ԱՇՏՄԱԿ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով անցկացված գնանշման հարցման հրավերի տեսաձայնագրությունը/ ձայնագրությունը,

2. Ուսումնասիրել նշված փաստական հանգամանքները և իրավախախտում արձանագրելու դեպքում իրականացնել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի լիազորությունները,

3. Ապօրինությունների հաստատման դեպքում չեղյալ համարել անցկացված գնման արձանագրությունը և ըստ անհրաժեշտության պարտավորեցնել անցկացնել նոր գնանշման հարցման հրավեր՝ օրինականության խստիվ պահպանմամբ:

Արամ Անթանյանը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 01.03.2021թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, մասնակցել է նիստին և պնդել վերը շարադրված դիրքորոշումը:

2.<u>«Աշտարակի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Աշտարակի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ը (հետայսու նաև՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 26.02.2021թ. թիվ 70 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում ենք Ձեզ, որ սույն թվականի փետրվարի 19-ին ժամը 11:00-ին տեղի է ունեցել «Աշտարակի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հայտարարված մեքենայի վարձակալության ծառայությունների ձեռքբերման նպատակով թիվ «ԱՇՏՄԱԿ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով թղթային եղանակով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստը: Մինչև սույն թվականի փետրվարի 19-ի ժամը 11:00-ն հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից՝ Ա/Ձ Սլավիկ Հովսեփյանը:

Հարկ ենք համարում նշել, որ կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման (COVID 19) հետ կապված գնումների համակարգող և հանձնաժողովի քարտուղար Ֆ. Մանգյանն Ընթացակարգի հայտերի բացման նիստը վարել է հեռավար կարգով՝ էլեկտրոնային հարթակի միջոցով: Ընթացակարգի բացման նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Հ.Պետրոսյանը /տնօրենի տեղակալ/, անդամներ՝ Մ.Արշակյանը /սոց. մանկավարժ/ և Մ. Սիմոնյանը /պահակ/, որպես դիտորդներ մասնակցում էին նաև Պատվիրատուի տնօրեն Գ.Աղաբաբյանը, գլխավոր հաշվապահ Ս.

Հակոբյանը, տնտեսվար Ս.Պապոյանը: Ընթացակարգի հայտերի բացման նիստը ավարտվել է 11:30-ին, որից հետ՝ 11:50-ին, ներս է մտել Ա.Անթանյանը առանց Ընթացակարգին մասնակցելու հայտի: Հավելում ենք նաև, որ նիստը ընթացել է օրենքի սահմաններում, չի եղել գերիշխող դիրքի չարաշահում և շահերի բախում, իսկ տեխնիկական խնդիրների պատճառով հնարավոր չի եղել ապահովել Ընթացակարգի հայտերի բացման նիստի տեսաձայնագրությունը կամ ձայնագրությունը:

Խնդրում ենք չկասեցնել Ընթացակարգի հետագա ընթացքը՝ չխոչընդոտելու Պատվիրատուի աշխատանքային գործունեությունը գնման ժամանակացույցի կատարման նպատակով:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ Բողոք բերող անձի կողմից ներկայացված բողոքը անհիմն է և ենթակա է մերժման»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 01.03.2021թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր իրենց հերթին պնդել են վերը շարադրված դիրքորոշումը, ինչպես նաև հայտնել, որ տեխնիկական միջոցների բացակայության պատճառով զրկված են եղել նիստը ձայնագրելու կամ տեսաձայնագրելու հնարավորությունից, իսկ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Covid-19 համավարակի վարակակիր լինելու պատճառով ներկա չի գտնվել նիստին, այլ մասնակցել է հեռախոսազանգի միջոցով:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/04 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2021/04 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Աշտարակի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար մեքենայի վարձակալության ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԱՇՏՄԱԿ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

2. «ԱՇՏՄԱԿ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստը կայացել է 2021 թվականի փետրվարի 19-ին՝ ժամը 11:00-ին:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով քաղաքացի Արամ Անթանյանի կողմից 22.02.2021թ. ներկայացված բողոքը, Պատվիրատուի կողմից 26.02.2021թ. թիվ 70 գրությամբ և 01.03.2021թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի ընթացքում ներկայացված դիրքորոշումը և գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով: Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է հանձնաժողովի անդամների երկու երրորդը: Հայտերի բացման նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են հանձնաժողովի քարտուղարը և հանձնաժողովի առնվազն երկու անդամ:

Նույն կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ նիստերը տեսաձայնագրվում կամ ձայնագրվում և արձանագրվում են, և յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ

նիստի արձանագրությունը: Արձանագրությունը գնման ընթացակարգի արձանագրության անբաժանելի մասն է:

Այսպես, «Աշտարակի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար մեքենայի վարձակալության ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԱՇՏՄԱԿ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

«ԱՇՏՄԱԿ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստը կայացել է 2021 թվականի փետրվարի 19-ին՝ ժամը 11:00-ին:

Այսպիսով՝ անդրադառնալով Պատվիրատուի կողմից դիրքորոշմամբ ներկայացված փաստական համգամանքներին՝ հարկ եմ համարում հայտնել հետևյալը.

Պատվիրատուն 26.02.2021թ. թիվ 70 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ նշել է, որ կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման (COVID 19) հետ կապված՝ գնումների համակարգող և հանձնաժողովի քարտուղար Ֆ. Մանգյանն ***<u>Ընթացակարգի հայտերի բացման նիստը վարել է հեռավար կարգով՝ էլեկտրոնային հարթակի միջոցով: Այնուհետև՝ 01.03.2021թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի ընթացքում, հայտնել է, որ նիստը վարվել է հեռախոսազանգի միջոցով:</u>***

<u>Այս մասով հարկ եմ համարում արձանագրել, որ նիստի վարման նման ընթացակարգ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ:</u>

Ինչ վերաբերում է Պատվիրատուի դիրքորոշմամբ վկայակոչած այն հանգամանքին, որ տեխնիկական խնդիրների պատճառով հնարավոր չի եղել ապահովել Ընթացակարգի հայտերի բացման նիստի տեսաձայնագրությունը կամ ձայնագրությունը, հարկ եմ համարում ևս մեկ անգամ ընդգծել, որ Կարգի 26-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ նիստերը տեսաձայնագրվում կամ ձայնագրվում և արձանագրվում են, և յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը: Արձանագրությունը գնման ընթացակարգի արձանագրության անբաժանելի մասն է:

Միևնույն ժամանակ հարկ եմ համարում արձանագրել, որ թեև հայտերի բացման նիստը չի տեսաձայնագրվել կամ ձայնագրվել, որպիսի պայմաններում հնարավոր կլիներ հաստատել կամ հերքել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի իրավազորության հարցը, ***<u>այնուամենայնիվ Պատվիրատուի ներկայացուցիչները</u>***

01.03.2021թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի ընթացքում հայտնեցին, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Covid-19 համավարակի վարակակիր լինելու պատճառով ներկա չի գտնվել նիստին:

Այս մասով հարկ եմ համարում արձանագրել, որ Կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետը, այն է՝ ***հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է հանձնաժողովի անդամների երկու երրորդը: Հայտերի բացման նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են հանձնաժողովի քարտուղարը և հանձնաժողովի առնվազն երկու անդամ, հստակ սահմանում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի իրավազոր նիստի անցկացման պայմանները, որպիսիք, ինչպես արդեն նշվեց, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի և քարտուղարի կողմից չեն պահպանվել, մասնավորապես՝ Պատվիրատուն հայտնել է, որ քարտուղարը նիստին ներկա չի գտնվել, այլ մասնակցել է հեռախոսազանգի միջոցով, որպիսի ընթացակարգ, ինչպես արդեն վերը նշվեց, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ:***

Ուստի գտնում եմ, որ քաղաքացի Արամ Անթանյանի կողմից ներկայացված բողոքի 2-րդ կետով ներկայացված պահանջը, այն է՝ ուսումնասիրել նշված փաստական հանգամանքները և իրավախախտում արձանագրելու դեպքում իրականացնել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի լիազորությունները, հիմնավոր է և ենթակա է բավարարման, այսինքն՝ ոչ իրավազոր նիտի արդյունքում կայացված որոշումները ենթակա են դադարեցման:

Ինչ վերաբերում է քաղաքացի Արամ Անթանյանի կողմից ներկայացված բողոքի 3-րդ կետով ներկայացված պահանջին, այն է՝ ապօրինությունների հաստատման դեպքում չեղյալ համարել անցկացված գնման արձանագրությունը և ըստ անհրաժեշտության պարտավորեցնել անցկացնել նոր գնանշման հարցման հրավեր՝ օրինականության խստիվ պահպանմամբ, հարկ եմ համարում հայտնել հետևյալը.

Նախևառաջ հարկ եմ համարում արձանագրել, որ գնանշման հարցման նոր ընթացակարգ հայտարարելու անհրաժեշտություն չկա, քանի որ բողոքով ըստ էության վիճարկվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունների իրավաչափությունը, ինչն արդեն իսկ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ուսումնասիրության առարկա է դարձել և գնահատվել:

Իսկ ինչ վերաբերում է գնման արձանագրությունը չեղյալ համարելուն, ապա հարկ եմ համարում հայտնել, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նման փաստաթուղթ

նախատեսված չէ, հետևաբար գնման ընթացակարգի իրականացման ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից գնման արձանագրություն չի կազմվում:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ վերոնշված մասերով բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Քաղաքացի Արամ Անթանյանի կողմից 22.02.2021թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի.

1. Պարտավորեցնել «ԱՇՏՄԱԿ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ ընդունելու որոշում՝ գնահատող հանձնաժողովի 19.02.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշումները դադարեցնելու վերաբերյալ:

2. Բողոքի պահանջը՝ մնացած մասով, մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**